ւան, որ նշանակում է՝ Բագա-ի, այսինքն՝ Միհրի աւան, արաբերէն Բաղարաւան, նոր պարսկ. Բակուհ, Բաղհուհ) հնագոյն ժամանակներից սկսած կարեւոր դեր է խաղացել կըրօնի եւ առասպելների մէջ:

Անյիշատակ ժամանակներից սկսած այդտեղ վառւում էր Բագա-ի (Միհրի) անշէջ կըրակը՝ սնունդ ստանալով տեղական նաւթի աղբիւրից:

Այդ նաւթաղբիւրները պատմութեան մէջ առաջին անգամ Պտղոմէոսի կողմից են յիշատակւում, Բ. դարում Ք. յետոյ:

Շիրվանի այն իշխանները, որոնց հետ Օմայեան զօրավարներն իրենց արշաւանքների միջոցին ստիպուած էին գործ ունենալ, տակաւին զրադաշտական էին եւ կամ քրիստոնեայ, յամենայն դէպս՝ ոչ մահմեդական:

Շարվանի առաջին արաբ իշխանը (մալիք), որ յիշատակւում է պատմութեան մէջ, եղել է աշ-Շամմախ բէն Շուդան, Շամախի քաղաքի հիմնադիրը (798-9 թ. Ք. Յ.): Այնուհետեւ դալիս են ուրիշներ, իսկ 932 թ. սկսած մինչեւ 11-րդ դարու վերջերը ոչ մի տեղեկութիւն չունինք Շիրվանի մասին:

Երբ հայոց Յովհաննէս Զ. կաթողիկոսը (պատմագիր կոչուած) 909-10 թուականին ըստիպուած եղաւ փախուստ տալ մարդ-դազան ամիրապետ (էմիր) Իւսուֆի հալածանքներից, նա նախ եւ առաջ դիմեց Աղուանից երկրի արեւելեան կողմերը, մեծ իշխան Սահակի եւ Ատրներսէհ թագաւորի մօտ, որ բնակութիւն ունի Կովկասի հիւսիս-արեւելեան կողմը: Նրանք էլ մեր համայնքից են եւ մեր հայկական արօտի հօտ»:

Կաթողիկոսը խսկապէս որ մեծ աջակցութիւն գտաւ նրանց կողմից, ինչպէս ինքն է հաղորդում իր Պատմութեան մէջ:

Այդ Ատրներսէհը Շաքէի (այժմեան Նուխի) թագաւորն էր, որդի Համամի, որ 9-րդ դ. վերջերին վերականգնել էր Աղուանից թագաւորութիւնը:

11-րդ դարում հայերը դիտում էին Աղուանքը, որ չափով որ նա դեռ քրիստոնեայ էր մնացել, որպէս հայկական երկիր: Երբ պարսիկ էմիր Աբուլ Սուվարը 1040-41 թուականին Գանձակից Աղուանք մտաւ, Դաւիթ Անհող թագաւորը կանչեց Աղուանից Յովսէփ կաթողիկոսին եւ հրամայեց նրան, ասելով.

«Ժողովիր քո հայ երկրի բոլոր եպիսկոպոսներին, որոնք Աղուանքում են, եւ ե՛կ մեր բանակատեղին»:

Ու կաթողիկոսը գալիս է 200 եպիսկոպոսների հետ միասին, ինչպէս հաղորդում է Մատթէոս Ուռհայեցի պատմիչը: Սամուէլ Անեցին 1079-ին Աղուանքի կաթողիկոսին ուղղակի հայ կաթողիկոսների շարքում է յիշում, որոնց թիւը այն ժամանակ չորս էր:

Ասածներից հետեւցնել կարելի է, որ տակաւին քրիստոնեայ մնացած աղուանները, եւ ամենից առաջ Շաքէում ու Արցախում ապրողները, 11-րդ դարու ընթացքին հայացուեցին, ինչպէս որ առաջ էլ (սկզբնապէս ոչ-հայկական) Սիւնիքն էր հայացել:

Այդպիսով՝ հայ ազգը կատարելապէս ամբողջացել էր արդէն, երբ նրա գլխին տաճկական փոթորիկը փրթաւ:

Տակաւին հետաքրքրութեան կարօտ է այն խնդիրը, թէ Աղուանքի ու Ատրպատականի կատարեալ թրքացումը, որի սկիզբը, մոնղոլների արշաւանքով դրուեց, ե՞րբ աւարտուեց ու ամբողջացաւ: Մի քանիսը այն 26 լեզուներից — կամ աւելի շուտ բարբառներից—որոնք Ստրաբոնի ու այլոց տեղեկութիւններին նայելով խօսւում էին Աղուանքում, անտարակոյս մինչեւ օրս էլ պահուել են Դաղստանի լեռներում: Ընդհակառակը, աղուաներէն խօսակցական, յարաբերական լեզուն՝ արբառներէնը, որին զուգընթաց պարսկերէնն էլ գործածական էր, բոլորովին խեղդուեց Թուրքերէնի կողմից, եթէ հաշուելու չլինինք այն, որ Վարդաշէն ու Նիժ (Նուխիի մօտ) գիւղերում, ինչպէս եւ Կասպից լճի եղերքին գտնուող մի քանի ուրիշ փոքր վայրերում խօսուող լեզուն աղուաներէնի վերջին մնացորդն է6):

Միւս կողմից որպէս Շաքէի քրիստոնեայ ու հայացած աղուան բնակչութեան մնացորդներ համարելու է այն հայերին, որոնք այսօր ցրուած են թաթարների մէջ — Դաղստանի հա-

---

6) 1918-19-ի դէպքերի ընթացքում մեծապէս տուժեցին ինչպէս այդ շրջանի հայերը, այնպէս եւ Նիժի, Վարդաշէնի եւ միւս գիւղերի ուտիացիք.